

ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ
ST. KEVORK ARMENIAN CHURCH



ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ

Sunday Bulletin

ԿԻՐԱԿԻ, Ապրիլ 05, 2020


SUNDAY, April 05, 2020

9215 SE Church St., Clackamas, OR 97015

ՃԱՇՈՒ ԱՎԵՏԱՐԱՆ

Մատթեոս 21:1-17

Երբ Երուսաղեմին մօտեցան եւ եկան Բեթփագէ, Ձիթենեաց լեռան մօտ, այն ժամանակ Յիսուս իր աշակերտներից երկուսին ուղարկեց ու նրանց ասաց. «Գնացէ՛ք այդ գիւղը, որ ձեր դիմացն է, եւ այնտեղ կը գտնէք կապուած մի էշ եւ նրա հետ՝ մի քուռակ. արձակեցէ՛ք բերէք ինձ: Եւ եթէ մէկը ձեզ բան ասի, կ'ասէք, որ Տիրոջը պէտք են. եւ նա իսկոյն դրանք կ'ուղարկի»: Բայց այս բոլորը եղաւ, որպէսզի կատարուի մարգարէի խօսքը, որ ասում է. «Ասացէ՛ք Սիոնի դստերը, ահա դէպի քեզ է գալիս քո թագաւորը՝ հեզ եւ նստած էշի ու էշի քուռակի վրայ»: Աշակերտները գնացին եւ արեցին, ինչպէս Յիսուս իրենց հրամայել էր. եւ էշն ու քուռակը բերեցին, նրանց վրայ զգեստներ գցեցին. եւ նա նստեց դրանց վրայ: Եւ բազում ժողովուրդ իրենց զգեստները փռեցին ճանապարհի վրայ, իսկ ուրիշներ ծառերից ճիւղեր էին կտրում ու սփռում ճանապարհի վրայ: Առաջից եւ յետեւից գնացող ժողովրդի բազմութիւնը աղաղակում էր ու ասում. «Օրհնութի՛ւն Դաւթի Որդուն, օրհնեա՛լ է նա, որ գալիս է Տիրոջ անունով, օրհնութի՛ւն՝




բարձունքներում»: Եւ երբ նա մտաւ Երուսաղէմ,
ամբողջ քաղաքը դորդաց, եւ ասում էին՝ ո՞վ է սա:
Իսկ ժողովրդի բազմութիւնն ասում էր. «Սա Յիսուս
մարգարէն է, որ Գալիլիայի Նազարէթ քաղաքից
է»: Եւ Յիսուս մտաւ տաճար ու դուրս հանեց բոլոր
նրանց, որ տաճարի մէջ վաճառում ու գնումներ
էին անում. նա շուռ տուեց լումայափոխների
սեղաններն ու աղանձվաճառների աթոռները: Եւ
նրանց ասաց. «Գրուած է՝ իմ տունը աղօթքի տուն
պիտի կոչուի, իսկ դուք աւագակների որջ էք արել
այդ»: Տաճարի մէջ կոյրեր եւ կաղեր Յիսուսին
մօտեցան, եւ նա բժշկեց նրանց: Երբ
քահանայապետներն ու օրէնսգէտները տեսան այն
սքանչելիքները, որ նա արեց, եւ մանուկներին, որ
տաճարի մէջ աղաղակում էին ու ասում՝
օրհնութիւն Դաւթի Որդուն, բարկացան. եւ
ասացին նրան. «Լսո՞ւմ ես՝ դրանք ինչ են ասում»: Յիսուս
նրանց ասաց. «Այո՛, դուք չէ՞ք կարդացել,
թէ երեխաների ու ծծկերների բերանով
օրհնութիւն կատարեցիր»:





GOSPEL READING


Matthew 21:1-17




Now when they drew near Jerusalem, and came to Bethphage, at the Mount of Olives, then Jesus sent two disciples, saying to them, “Go into the village opposite you, and immediately you will find a donkey tied, and a colt with her. Loose *them* and bring *them* to Me. And if anyone says anything to you, you shall say, ‘The Lord has need of them,’ and immediately he will send them.”

All this was done that it might be fulfilled which was spoken by the prophet, saying:

“Tell the daughter of Zion,
‘Behold, your King is coming to you,
Lowly, and sitting on a donkey,
A colt, the foal of a donkey.’”



So the disciples went and did as Jesus commanded them. They brought the donkey and the colt, laid their clothes on them, and set *Himon* them. And a very great multitude spread their clothes on the road; others cut down branches from the trees and spread *them* on the road. Then the multitudes who went before and those who followed cried out, saying:





Hosanna to the Son of David!

‘Blessed is He who comes in the name of the LORD!’

Hosanna in the highest!”

And when He had come into Jerusalem, all the city was moved, saying, “Who is this?”

So the multitudes said, “This is Jesus, the prophet from Nazareth of Galilee.”

Then Jesus went into the temple of God and drove out all those who bought and sold in the temple, and overturned the tables of the money changers and the seats of those who sold doves. And He said to them, “It is written, ‘My house shall be called a house of prayer,’ but you have made it a ‘den of thieves.’”

Then *the* blind and *the* lame came to Him in the temple and He healed them. But when the chief priests and scribes saw the wonderful things that He did, and the children crying out in the temple and saying, “Hosanna to the Son of David!” they were indignant and said to Him, “Do You hear what these are saying?” And Jesus said to them, “Yes. Have you never read, ‘Out of the mouth of babes and nursing infants

You have perfected praise’?” Then He left them and went out of the city to Bethany, and He lodged there.



ՃԱՆԱՊԱՐՀՈՐՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏ

Աւագ Շաբթուայ Խորհրդածութիւններ

«Աչք ամենեցուն ի քեզ յուսան, եւ դու տաս կերակուր նոցա ի ժամու» (Մաթթ. ԸԽԴ. 15)



Սաղմոսի այս բառերուն մէջ է ամփոփուած մեր հաւատամքը եւ աւելին՝ մեր էութեան ողջ զգացողութիւնը, կապն Աստուծոյ հետ, հաւատքի գիտակցութիւնը եւ յատկապէս՝ անկեղծ սպասումն ու յանձնառութեան պատրաստակամութիւնը:

Աչք ամենեցուն ի քեզ յուսանէ: Բոլորիս միտքն ու հոգին դէպի Քեզ սեւեռուած է, Աստուած իմ: Եւ այս Սուրբ Շաբաթը կը նուիրականանայ մեր հոգեւոր կեանքին մէջ որպէս, Աւագ Շաբաթը Քու Միածին Որդուն, որ երկինքէն երկիր իջաւ լուսաւորելու համար ողջ աշխարհը եւ մարդկութիւնը բարձրացնելու դէպի Քեզ Ամենակարողդ Աստուած:

Բոլորիս աչքերը Քեզի կը հային եւ մեր սրտերը Քեզի կը յուսան, Քրիստոս Աստուած, որովհետեւ Քեզի հետ քայլող հաւատացեալը իր կեանքը կ'ուղղէ լոյսի ճանապարհէն դէպի առաւել կեանք:

Բոլորիս աչքերը Քեզի կը յուսան եւ Դուն բոլորիս հոգեւոր սնունդ կը մատակարարես առատօրէն որպէս ,կենարար հացէ: Ուրեմն Ծաղկազարդէն մինչեւ Զատիկ՝ Յարութեան Տօնը, ամբողջութեամբ անձնատուր ըլլանք Աստուծոյ, եւ ուխտենք ապրիլ Քրիստոսի հետ եւ Քրիստոսի նման: Որովհետեւ ինչքան աղօթքով ու հոգեւոր ընթերցումներով կը ներթափանցենք մեր հոգիին խորքը, այնքան եւս կը մօտենանք Արարիչն Աստուծոյ, բայց աւելին՝ մեր կեանքով կը դառնանք կրողը Աստուծոյ սիրոյն եւ Երկնաւորի իմաստութիւնը մատակարարող հոգեւոր անօթ, տաճար Աստուծոյ բնակութեան:

Քրիստոնէայ հաւատացեալը պէտք է իր կեանքը ապրի Քրիստոսի ուղեկցութեամբ, որպէսզի մեր կեանքը դառնայ լոյս եւ օրհնութիւն աշխարհի կեանքին մէջ: Եւ եթէ պահ մը մենք մեր ուղեկցութիւնը կորսնցնենք Քրիստոսի հետ, ապա այն


Ժամանակ կը դադրինք դառնալ հոգեւոր հոսանքը ընկերութեան կեանքին մէջ:

Աւագ Շաբթուան հոգեւոր ճանապարհորդութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ ճանապարհն առ Աստուած: Մեզի ներկայացող Քրիստոսի կեանքէն քաղուած պատկերները աստիճաններ են, որոնք մեր առջեւ կը պարզեն կեանքի մեծագոյն դասեր:

Ծաղկազարդը՝ Քրիստոսի յաղթական մուտքը Երուսաղէմ Սուրբ Քաղաք, կը ներկայացնէ մեր հոգիին պատկերը: Ինչպէս որ ոգեւորութեան մէկ պահուն մեր հոգին կը բանանք Քրիստոսին առաջ Ովսաննաներով եւ զինք որպէս թագաւոր կ'ընդունինք մեր կեանքէն ներս, նոյնպէս ալ՝ մէկ ուրիշ պահու, հոգեւոր բարձրութեն կը գահավիժենք դէպի նիւթին ու նիւթականին աշխարհը՝ մոռնալով Տիրոջ պատգամը, որ կ'ըսէ. ,Հոգի առաւել է քան զմարմին:

Աւագ Շաբթուան հոգեւոր ճանապարհորդութեան ամենէն էական հանգրուաններն են Վերջին Ընթրիքը, Ոտնլուան, Խաւարման Գիշերը, Աւագ Ուրբաթը, եւ վերջապէս Քրիստոսի հրաշալի Յարութիւնը: Այս բոլորին հետ մնայուն հաղորդակցութեան մէջ եղող հաւատացեալը կը դառնայ նոր, լուսազարդ ու պայծառակերպ մարդ, որ կը մերժէ իր մէջ կարծրացած հին մարդը՝ եւ կը դիմէ Քրիստոսի՝ Իրմով դառնալու համար Նոր Մարդը:

Վերոյիշեալ հանգրուանները բոլորն ալ մեզ կը հաղորդեն որոշակի պատգամներ. Ոտնլուայով մեզի կը փոխանցուի խոնարհութեան մեծագոյ օրինակը, Վերջին Ընթրիքով՝ պատարագումը մեր Փրկչին՝ Յիսուս Քրիստոսին եւ խորհուրդը Փրկագործութեան: Այս հանգրուանները մեզի կը տանին դէպի բարձունքները Քրիստոսի Յարութեան:



THE LENTEN JOURNEY... A WALK WITH GOD

By Archbishop Hovnan Derderian

“The eyes of all hope for You, and You give them their food in due time” (Psalm 145: 15)

These words of faith and hope in the Psalm express the sense of our entire being. They connect us with God and make us aware of our faith. They express a faithful person’s honest expectations and readiness to assume responsibilities.

“The eyes of all hope for You.” Our minds and hearts look to You, O Lord, our God. This Holy Week will be sanctified in our spiritual life as the “Holy Week” of Your Only Begotten Son, who descended from heaven to earth to illuminate the entire world and to lift up humanity towards You, O Almighty God.

Our eyes look to You, O Lord, and our hope is in You, O Christ our Lord, because by walking with you in your path of light, the life of those who believe in You are transformed. Our eyes hope in You, O Lord, because you provide us spiritual nourishment abundantly as the “bread of life.”

From Palm Sunday to Easter Sunday, let us dedicate ourselves completely to God to be worthy to celebrate the Feast of the Resurrection. Let us vow to live with Christ and like Christ. The more we become in touch with our deeper soul through prayer and spiritual readings, the closer we become to God, the Creator of all. Even more, through our renewed life, we become the bearers of God’s love; and through heavenly wisdom granted to us, we prepare our souls as a place where God can reside.

As Christian believers we should live our lives by walking along Christ, so that our lives on this earth are illuminated and

blessed. And if for even a moment we lose our pace with Christ, we stop being a spiritual channel in the life of society.

The journey of the Holy Week is nothing else but the way to God. The images from Christ's life presented to us during the Holy Week reveal the most significant lessons of life.

Palm Sunday, the triumphant entry of Christ into the Holy City of Jerusalem, represents an image of our soul. Even as spiritually we open our soul before Christ with *Hosannas* and received him as a king in our life, at times we fall down from this spiritual height into materialism, the world of materials, forgetting the Lord's command that "It is the spirit that gives life; the flesh counts for nothing" (John 6:63).

The most essential stations of the Holy Week's spiritual journey are the services marking the Last Supper, the Washing of the Feet, the Passion and Crucifixion of Christ, which lead up to the celebration of Christ's magnificent Resurrection. By partaking in these events in Christ's life, our lives are renewed, illuminated and transformed. We reject the hardened, old person in us and become a new person in and through Christ.

The various aspects of Christ's life during the Holy Week have definite message and meaning for us. Christ shows us the greatest example of humility by washing the feet of his disciples. He becomes the ultimate sacrifice for the salvation of the world as seen in the Last Supper. Christ triumphs over death through his death and resurrection, on Eastern Sunday.

Indeed, with the words of the Psalm, let our eyes look to the Lord for hope, because He gives us our food in due time.



ԾԱՂԿԱԶԱՐԴ

Սուրբ Յարութեանը նախորդող Կիրակի օրը Հայ Առաքելական եկեղեցին նշում է Ծաղկազարդը, որը խորհրդանշում է Քրիստոսի յաղթական մուտքը Երուսաղեմ: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ծաղկազարդը հռչակել է որպես մանուկների օրհնութեան օր, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Տիրոջ Երուսաղեմի տաճար մտնելու ժամանակ մանուկներն աղաղակում էին ասելով. «Օրհնութի՛ն, Դաւթի որդուն» (Մատթ. 21:15): Յիսուսը եկաւ աւետարանելու աղքատներին, բժշկելու սրտով բեկուածներին, գերիներին ազատելու և կոյրերին տեսողութիւն պարգեւելու, ինչպէս մարգարէացել էր Եսային: Շատ կոյրեր, դիմելով Յիսուսին, բժշկուեցին: Յիսուսի մուտքը Երուսաղեմի ժողովուրդն ընդունել է խանդավառութեամբ՝ ձիթենու և արմաւենու ճիւղերը, ինչպէս նաև իրենց զգեստները փռելով ճանապարհի վրայ և աղաղակելով. «Ովսաննա Բարձեալին, օրհնեալ լինի Նա, ով գալիս է Տիրոջ անունով, օրհնեալ լինի մեր հօր՝ Դաւթի թագաւորութիւնը, որ գալիս է: Խաղաղութիւն երկնքում և Փառք բարձունքներում» (Մարկ. 10:9-10): Համաձայն եկեղեցու հայրերի ուսուցումների, Յիսուսի առջև հանդերձներ նետելը խորհրդանշել է մեղքերից ազատուելը: Ոստեր և ճիւղեր ընծայելը խորհրդանշել է առանձնակի պատիւներ և հանդիսաւորութիւն: Ձիթենին համարուել է իմաստութեան, խաղաղութեան, յաղթանակի և փառքի խորհրդանշան: Ձիթենու և արմաւենու ճիւղերի ընծայումը Քրիստոսին, որը մեռեալ Ղազարոսին յարութիւն տուեց, խորհրդանշում է մահուան հանդէպ յաղթանակը: Ծաղկազարդի նախօրէին՝ շաբաթ օրը, կատարուում է Ծաղկազարդի նախատօնակը, բացում է խորանի վարագոյրը, իսկ յաջորդ օրը ժամերգութիւնից յետոյ, բաց վարագոյրով մատուցում է Ս. Պատարագ: Ծաղկազարդի առաւօտեան եկեղեցում օրհնում են ձիթենու կամ ուռենու ոստերը և բաժանում ժողովրդին: Ուռենու ոստերը, որոնք անպտուղ են, խորհրդանշում են հեթանոսներին և պտղաբերեցին միայն Քրիստոսին ընծայուելուց յետոյ: Ոստերի փափկութիւնը խորհրդանշում է Քրիստոսին հետևողների խոնարհութիւնը: Ուռենու ճյուղերը մեր ընծաներն են Տիրոջը, ինչպէս Ծննդեան օրը մոգերի բերած ընծաները: Յիսուս Քրիստոսին ճանաչում ենք որպէս Թագաւոր՝ յաղթական պսակը գլխին, անէծքը վերացնող և կենդանութիւն պարգեւող: Այդ օրը եկեղեցիներում մանուկների օրհնութեան կարգ է կատարուում:





PALM SUNDAY

The first observance related to the Feast of the Resurrection is the Remembrance of the Raising of Lazarus (commemorated on the Saturday before Holy Week), which foreshadows our Lord's own miraculous Resurrection. It serves as an introduction to the glorious Resurrection of our Lord and not as a commemoration of Lazarus and his sisters, which is celebrated separately.

The following day, Palm Sunday, marks Christ's triumphant entry into Jerusalem as Messiah. Sometimes Palm Sunday is referred to as Advent, in reference to Christ's coming as the Messiah to Jerusalem and to His Passion. For that reason it is connected with Christ's Second or Final Coming, and is celebrated in the Armenian Church in the evening with the special "Opening of the Doors" (Trnpatsek) ritual; a foreshadowing of the Last Judgment.





Ապրիլ - April 2020



ՍՐ. ԳԷՈՐԳ. ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

ST. KEVORK ARMENIAN APOSTOLIC CHURCH OF OREGON

Sunday	Monday	Tuesday	Wednesday	Thursday	Friday	Saturday
			1	2	3	4
5 *Palm Sunday 10:30 AM Մաղկաղարդ Ս. Պատարագ ժամը 10:30-ին	6	7	8	9 **Washing of the Feet 6:30 PM Ոսկուայ ժամը 6:30-ին	10 Good Friday, Burial Service 8:00 PM Աւագ Ուրբաթ Թաղման Արարողութիւն ժամը 8:00-ին	11 Holy Saturday, Eve 6:00 PM Հրազալոյց Ս. Ցարութեան ժամը 6:00-ին
12 Easter 11:00 PM Ս. Ցարութեան Պատարագ ժամը 11:00-ին	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30		

*April 5th- Children's Procession 12:00 PM , Մանուկների Թափօր ժամը 12:00-ին, Opening Doors Ceremony 12:30PM, Դռնբացէք ժամը 12:30-ին

**April 9th- Maundy Thursday, Holy Liturgy 11:30 Ս. Պատարագ ժամը 11:30-ին, Order Of Darkness Passion 8:00PM, Խաւարում ժամը 8:00-ին

Lenten Vespers 7PM, Հսկում ժամը 7-ին: February 28th, March 6th, 13th, 20th, 27th and April 3rd

**LIVE STREAMING
SERVICES WILL BE
BROADCASTED
OVER FACEBOOK
FOLLOW THE CALENDAR**

HAPPY EASTER

**Easter Sunday Resurrection
April 12th 2020**

**St. Kevork Armenian Apostolic Church
Divine Liturgy 11:00 AM**

**Շնորհաւոր Սուրբ Զատիկ
Քրիստոս Զարեալ Ի Մեռելոց**

**Սուրբ Պատարագ
Ս. Գեորգ Եկեղեցւոյ մէջ
Ապրիլ 12, 2020 ժամը 11:00-ին**